**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ**
**27 հունիսի, 2020 N 33**

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 24 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 27 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով և հաշվի առնելով, որ վերացել է Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը՝ ***ո ր ո շ ու մ  ե մ.***

1. Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի հունիսի 11-ի «Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Հարթաշեն, Քյուրաթաղ, Ակնաղբյուր և Ուխտաձոր համայնքներում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 24 և 2020 թվականի հունիսի 13-ի «Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Տող, Տումի և Մոխրենես համայնքներում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 27 որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**